

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 14/7

21 հունիսի 2016թ.

Քննարկվեց «Աում» ՍՊԸ գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 22.10.2015թ-ի թիվ 302284/03 որոշման դեմ:

«Աում» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«Աում» ՍՊԸ-ն զբաղվում է դիետիկ հացի արտադրությամբ և հարկային տեսչությունում հաշվառված է որպես ընտանեկան գործունեության սուբյեկտ: ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 22.10.2015թ. կայացված վարչական իրավախախտման վերաբերյալ որոշմամբ կիրառվել է տուգանք 20.000 դրամի չափով, սակայն վարչական տուգանքի որոշումը ժամանակին գանգատաբերը չի ստացել: Տեղեկանալով նման որոշման առկայության մասին գանգատաբերը դիմել է իրավաբանական բաժին, որտեղ իրեն է տրամադրվել 26.05.2016թ. որոշման երկրորդ օրինակը:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է չեղյալ ճանաչել 22.10.2015թ. թիվ 302284/03 որոշումը, քանի որ որպես ընտանեկան գործունեություն իրականացնող ամսական կտրվածքով եկամտային հարկի հաշվարկներ ներկայացնելու պարտավորություն չի կրում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 13.10.2015թ. վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ «Աում» ՍՊԸ-ի տնօրեն Օլբիկ Մկրտչյանը սահմանված ժամկետում չի ներկայացրել եկամտային հարկի հունիս, հուլիս ամիսների հաշվարկները: Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 22.10.2015թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 302284/03 որոշումը (այսուհետ նաև Որոշում), որով Օլբիկ Մկրտչյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամի չափով:

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ Որոշումը կայացվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով նախատեսված պահանջների խախտմամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն. «Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի»:

Քննարկվող դեպքում Օլբիկ Մկրտչյանը վարչական պատասխանատվության է ենթարկվել 2015թ-ի հունիս և հուլիս ամիսների եկամտային հարկի ամփոփ հաշվարկները սահմանված ժամկետներում չներկայացնելու համար:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն հարկային գործակալները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել եկամտային հարկի ամփոփ հաշվարկ:

Վերոգրյալից հետևում է, որ Օլբիկ Մկրտչյանի կողմից իրավախախտումները կատարվել է 2015թ-ի հուլիսի 21-ին և օգոստոսի 21-ին, սակայն վարչական տույժը նշանակվել է միայն 22.10.2015թ-ին: Այսինքն՝ վարչական տույժը նշանակվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետի խախտմամբ, այն է՝ իրավախախտումը կատարվելու օրվանից երկու ամիս հետո ընկած ժամանակահատվածում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 22.10.2015թ-ի թիվ 302284/03 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ